

Հ. Մ. Սահակյան

**«ՀՈՒՄԿ» ԿՀ 2017-2018 ուստարվա գործունեության վերաբերյալ
ռեկտորի տարեկան հաշվետվությունը**

Երևան 2018

«ՀՈՒՄԿ» ԿՀ 2017-2018 ուստարվա գործունեության վերաբերյալ ռեկտորի տարեկան հաշվետվությունը

2017-2018 ուսումնական տարում «ՀՈՒՄԿ» կրթական հիմնադրամի գործունեությունը ընթացել է՝ որպես ուղեցույց ունենալով «ՀՈՒՄԿ» ԿՀ «Զարգացման 2015-2020 թթ ռազմավարական պլանի» իրականացման խնդիրներն ու նպատակները: Կազմվել է կարճաժամկետ պլան, որի համաձայն պլանավորվել են գործողությունները ուսումնական տարվա համար:

Նշանակալի աշխատանքներ են տարվել ուսումնական գործընթացի կատարելագործման, կրթության որակի բարձրացման և միջազգային չափանիշներին առավել համապատասխանեցման, կրթական միջավայրի բարելավման և այլ ուղղություններով:

1. Ընդունելություն

2017-2018 ուստարում «ՀՈՒՄԿ» ԿՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ երկամյա մագիստրատուրա առկա ուսուցմամբ ընդունվածների թիվը 19 է, ավարտական կուրսի ուսանողների ընդհանուր թիվը՝ 20 ամփոփիչ ատեստավորումը հաղթահարած ուսանողների թիվը՝ 17/ մեկը՝ նախորդ ուստարիներից/:

2017-2018 ուստարում «ՀՈՒՄԿ» ԿՀ առկա ուսուցմամբ մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում սովորողների ընդհանուր թիվը 39 է:

2017-2018 ուստարվա ուսանողական կազմից մեկ ուսանող ստացել է հեռացման, երեք ուսանող՝ ազատման հրաման:

2. «ՀՈՒՄԿ» ԿՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմը

2017-2018 ուստարում պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընդհանուր թիվը 12-ն է, որից հիմնական աշխատող դասախոսների թիվը 6-ն է, համատեղությամբ՝ 6-ը, այդ թվում 1 դոկտոր, 6 գիտությունների թեկնածու: Նրանցից 2-ն ունեն դոցենտի կոչում, 1-ը՝ պրոֆեսորի:

N	Անունը, ազգանունը	Որակավորումը	Գիտական կոչումը	Աշխատանքը (հիմնական, համատեղությամբ)
1.	Հասմիկ Սահակյան	Տնտեսագետ- մաթեմատիկոս	Դիպլոմավորված մասնագետ	հիմնական
2.	Լուսինե Սահակյան	Ռուսաց լեզվի և գրակ, անգլերեն լեզվի ուսուցիչ	Դիպլոմավորված մասնագետ	հիմնական
3.	Մարինա Խաչատրյան	Ֆինանսների մագիստրոս	Ֆինանսների մագիստրոս	հիմնական
4.	Արմեն Մելքումյան	Տնտեսագետ- մաթեմատիկոս	տ.գ.թ.	հիմնական
5.	Հասմիկ Մխիթարյան	Ֆինանսների մագիստրոս	Ֆինանսների մագիստրոս	հիմնական
6.	Մարինե Համբարձումյան	Ֆինանսների մագիստրոս	Ֆինանսների մագիստրոս	հիմնական
7.	Վեհանուշ Մարուխյան	Տնտեսագետ	Տ.գ.թ.	համատեղությամբ
8.	Լիանա Գրիգորյան	Տնտեսագետ	Դոցենտ, տնտ. դոկտոր	համատեղությամբ
9.	Էդգար Աղաբեկյան	Տնտեսագետ	Դոցենտ, տ.գ.թ.	համատեղությամբ
10.	Գուրգեն Գապարյան	Տնտեսագետ	Տ.գ.թ.	համատեղությամբ
11.	Արարատ Անտոնյան	Իրավաբան- իրավագետ	Իրավաբանության մագիստրոս	համատեղությամբ
12.	Մելս Սահակյան	Մաթեմատիկայի միջն. դպրոցի ուսուցիչ	Պրոֆեսոր, ֆիզ. մաթ. գիտ. թեկնածու	համատեղությամբ

2017-2018 ուստարում դասախոսների կողմից հրատարակվել են 2 դասագրքեր, ուսումնամեթոդական ձեռնարկներ, 1 մենագրություն, 31 գիտական հոդվածներ:

Ուսումնական պրակտիկայի կազմակերպման համար կնքվել են պայմանագրեր տարբեր կազմակերպությունների հետ, որոնց ցուցակը բերվում է ստորև.

3. Պրակտիկայի պայմանագրերի ցանկը՝ ուսանողների թվի նշումով

Նո	Կազմակերպությունը	Կնքման տարեթիվը	Ավարտը	Ուսանողների սահմանային թիվը
1	Դ-Տելեկոմ	19 հոկտեմբերի, 2011թ.	Առ այսօր	Ըստ անհրաժեշտության
2	«Հայնախագիծ» ԲԲԸ	07 դեկտեմբերի, 2016 թ.	31 դեկտեմբերի, 2019 թ.	5
3	«Գոհար Սահինյան» ԱԶ	06 դեկտեմբերի, 2016 թ.	31 դեկտեմբերի, 2019 թ.	1
4	«Գրանթ Թորոնթոն» ՓԲԸ	06 դեկտեմբերի, 2016 թ.	31 դեկտեմբերի, 2019 թ.	10
5	«Մետեո-Թի Վի» ՍՊԸ	02 դեկտեմբերի, 2016 թ.	31 դեկտեմբերի, 2019 թ.	5
6	«ԹՄ Աուդիտ» ՓԲԸ	06 դեկտեմբերի, 2016 թ.	31 դեկտեմբերի, 2019 թ.	5
7	«Իմատրիքս գրաֆիկա» ՍՊԸ	06 դեկտեմբերի, 2016 թ.	31 դեկտեմբերի, 2019 թ.	5
	Ընդամենը՝			31 և ավելի

4. Հասարակական պատասխանատվությունը

«ՀՈՒՄԿ» ԿՀ-ի առաքելություններից է նպաստավոր միջավայրի ստեղծումը՝ հաշվապահության ուսուցման բնագավառում որակյալ և արդիական կրթություն ապահովելու, անհատի ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակելու համար: Ուստի հիմնադրամը իր տրամադրած կրթության, իրականացված գործունեության, օգտագործված ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակայնությանը:

Հասարակությանը տրամադրվող ծառայությունները «ՀՈԻՄԿ» ԿՀ-ի առաքելություններից է: «ՀՈԻՄԿ» ԿՀ-ի Զարգացման 2015-2020 թթ՝ ռազմավարական պլանով նախատեսված խնդիրներից է «ՀՈԻՄԿ» ԿՀ ռեսուրսների օգտագործման միջոցով հանրային կարիքներին ուղղված ծառայությունների:

Համաձայն այդ կարևոր խնդրի իրագործման, «ՀՈԻՄԿ» ԿՀ-ն ակտիվորեն իրականացնում է սկսնակ, գործող հաշվապահների, ձեռներեցների համար մասնագիտական զարգացման/ վերապատրաստման դասընթացներ, անհրաժեշտության դեպքում նաև խորհրդատվություն: Մասնավորապես, կարելի է նշել գործազուրկների, գործազուրկ կանանց համար կազմակերպված դասընթացները (տես www.iatc.am կայքէջ, Training Projects էջը):

Կազմակերպած սեմինարները օգնում են մասնակիցներին վերապատրաստվելու աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան, օգնում աշխատանք գտնելու:

«ՀՈԻՄԿ» ԿՀ-ի հաշվետվողականությունը նպաստում է նրա գործունեության հրապարակայնությանը և թափանցիկությանը, բարձրացնում նրա պատասխանատվությունը ինչպես սովորողների և դասավանդողների, այնպես էլ պետության և հասարակայնության առջև: Բացի դրանից, հաշվետվողականությունը հնարավորություն է ընձեռում գնահատելու և արժևորելու հիմնադրամի ձեռքբերումները, հայտնաբերելու բացթողումները և թերացումները, գտնելու դրանց հաղթահարման ուղիները:

«ՀՈԻՄԿ» ԿՀ-ի գործունեությունը հասարակայնությանը հիմնականում հասանելի է www.iatc.am պաշտոնական կայքէջում հրապարակված տեղեկատվությունից, գովազդային բուկլետներից և բրոշյուրներից: Կայքէջում և ֆեյսբուկյան էջում տեղադրված են մագիստրատուրայի, սկսնակ և գործող հաշվապահների դասընթացների, կարճաժամկետ և երկարաժամկետ հաշվապահական դասընթացների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, պրոֆեսորադասախոսական անակազմի, «ՀՈԻՄԿ» ԿՀ-ի հրատարակությունների, ձեռքբերումների, տարբեր տոնավաճառներին, աշխատաշուկաներին, կոնֆերանսներին մասնակցության վերաբերյալ տեղեկատվությունը: Կայքէջում արտացոլվում է նաև շրջանավարտների և կարիերայի կենտրոնի գործունեությունը:

Նշենք, որ «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի Զարգացման 2015-2020 թթ ռազմավարական կարևորագույն խնդիրներից է «ՀՈՒՄԿ» ԿՀ Web-կայքի կատարելագործումը՝ այն տեղեկատվության և լրատվության կատարյալ միջոց դարձնելու համար:

Նախատեսվում է կայքէջում տեղադրել ՄՈՒՀ-ի Գիտական խորհրդի որոշումներն ու արձանագրությունները, կանոնադրություններն ու կանոնակարգերը, հիմնադրամի բյուջեն, գնումները, հաշվետվություններն ու վերլուծությունները: Բացի դրանից, այնտեղ պետք է արտացոլվի հիմնադրամի ուսումնական ողջ գործընթացը. դասացուցակը, քննատախտակը, քննությունների արդյունքները: Նախատեսվում է տեղադրել սույն տարվա տեղեկատվությունը, իսկ այնուհետև այն համալրել նաև նախորդ տարիների տեղեկատվությամբ:

2017թ. լրամշակվեց և Գիտխորհրդի կողմից հաստատվեց «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում, որի նպատակը «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի գործունեությունը հասարակայնությանը հասանելի դարձնելն է, հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և ամրապնդումը, «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի վարկանիշի շարունակական բարձրացումը («ՀՈՒՄԿ» ԿՀ քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում», հաստատված Գիտխորհրդի նիստում):

Քաղաքականության իրականացման պատասխանատուներն են «ՀՈՒՄԿ» ԿՀ ռեկտորը, Գիտխորհուրդը, Որակի ապահովման կենտրոնը, Կարիերայի և մասնագիտական զարգացման կենտրոնը:

Մասնավորապես, նախատեսվում է հաստատության գործունեությունը լուսաբանելու և ներկայացնելու նպատակով պարբերաբար մամուլում հրապարակել հաղորդագրություններ, մասնակցել տեղական, տարածաշրջանային ու միջազգային աշխատաշուկաներին, ցուցահանդեսներին ու տոնավաճառներին, կատարելագործել «ՀՈՒՄԿ» ԿՀ-ի Web-կայքը, դարձնել այն տեղեկատվության և լրատվության միջոց և այլն:

5. Գիտահետազոտական գործունեությունը

Գիտահետազոտական գործունեությունը համարվում է ՄՈՒՀ-ի զարգացման ռազմավարական ուղղություններից: Այստեղ հատկապես կարևորվում է մեր

ուսանողների, դասախոսների և շրջանավարտների կողմից գիտահետազոտական քաղաքիչի զարգացման և առաջնորդման ուղղությամբ աշխատանքների իրականացումը: Այս առումով պետք է նշել, որ արդեն 4-րդ ուսումնական տարի է, որ ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել միջբուհական գիտաժողովների կազմակերպմանը, որը դարձել է արդեն յուրահատուկ մասնագիտական հավաքատեղի ոլորտի առաջատար գիտնականների, մասնագետների, երիտասարդ, սկսնակ գիտնականների, ՄՈՒՀ-ի արտաքին շահառուների, ՀՀ-ում աշխատող / սովորող արտասահմանցի հետազոտողների համար:

Այս միջավայրի կարևորումը ստիպեց ՄՈՒՀ-ին հիմնելու «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական հանդեսը: Այս առումով ՄՈՒՀ-ի ղեկավարությունը իր առջև ռազմավարական նկատար է դրել դիմել ՀՀ ԲՈԿ-ին, որպեսզի սույն հանդեսը իր պատվավոր տեղն ունենա ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակում:

6. «ՀՈՒՄԿ» ԿՀ հրատարակչական գործունեությունը

Հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը ՄՈՒՀ-ը շարունակում է իր հրատարակչական գործունեությունը՝ ապահովելով իր արտաքին և ներքին շահակիցներին ժամանակակից գրականությամբ: Տպագրության են պատրաստվել «Ֆինանսներ և հաշվապահական հաշվառում» գիտական հանդեսի 2 համար, 2019 թ. – ի համար նախանշված է վերահրատարակել «Հաշվապահական հաշվառում» ուսումնական ձեռնարկը: Նշենք նաև, որ ՄՈՒՀ-ը յուրաքանչյուր անգամ հաշվի է առնում գիտական համայնքի կրթական պահանջմունքները՝ ապահովելով մեր կողմից հրատարակված նյութերի օրինակների առկայությունը ՀՀ տարբեր գրադարաններում: